ԹՌՉՈՒՆ ՄԸ ՊՈՒՐԱԿԻՆ ՄԷՋ

Պուրակին մէջ բոցի նըման կ'արծարծի՛
Ձայնիկդ հիւսուած կարծես շողի շիթերով...
Տրտունջի պէս երկա՛ր, խորունկ, վշտալի,
Սիրերգի պէս քաղցր, յուզական, հոգեթով:

Թռչնի՛կ, ինչո՞ւ եղանակն այս սո՛ւր, լալկան,
Ըսէ՛, ինձ պէս չունի՞ երազդ յագեցում.
Եւ որ փոքրիկ մարմնոյդ մէջ իղձդ անսահման
Այսպէս կ'աճի կ'ալեկոծի՛ անհատնում...:

Աւա՜ղ, թռչնակ, քանդուած բոյնի՞դ համար հին,
Կամ զարնըւած եղբայրներո՞ւդ համար դուն
Կ'եղերերգես այդ սրտակէզ մեղեդին
Ու կը հսկես սաղարթներուն մէջ արթուն...:

Քու աշխա՞րհդ ալ լի է ոխով մշտարծարծ
Նըմաններուդ սարքած ռազմով ոճրական...
Որ հոս մենիկ, ճիւղերու մէջ թաքնըւած՝
Կը հեծեծե՛ս մեղմ շեշտերով դիւթաձայն:

Ա՜հ, ո՞ր գաղթին, ո՞ր երթերուն հեռակայ,
Ո՞ր անհընա՜ր երջանկութեան կարօտին
Պատկերն անհաս ձայնիդ հեւքով կը թրթռայ...
Ո՞ր սէրերուն համար թեւերդ կ'արիւնին...:

Շո՛ւնչ դաշնալուր, նախըզգացումն Անէին,
Մեծ լըռութեան մահասարսուռն ապագայ՝
Զեն որ ձայնիդ կու տան խազերն այդ ջերմին,
Ինքնատուր այս սրտազեղո՛ւմդ անխընայ...:

Գիշեր է, տե՛ս, պուրակին մէջ ու նիրհած՝
Ծառ ու ծաղիկ լուսնակին տակ ցողաշիթ.
Ինչո՞ւ դուն ու ես ենք երգի՛չ սիրարբած,
Որ չունինք քուն, չունինք դադար ու հանգիստ...:

Լա՛ց, ի՛մ թռչնակ, խառնէ՛ զեղօնդ հովերուն,
Ցայտաղբիւրի նըման թող կեանքդ յորդի՛
Դէպի աստղերն ու դէպի սիրտս այս պահուն՝
Որ շեշտերուդ ըզգլխանքովն է առլի:

Ա՜հ, վշտին լե՛ռ ծանրութեան տակ չդադրի՛
Քու երգդ, լոյսի ակնաղբիւրին այդ, ի՛մ եղբայր,
Ի՛մ բանաստեղծ, իմ բորբ երգի՛չ անտառի,
Գարնանաշունչ աւետաբե՛ր սիրավառ...:

Ու բարձրաբերձ ճիւղերու վրայ ծըւարած՝
Իբր ըլլայիր նաւաստի մը կայմին վրայ,
Որ հովերու դէմ կ'ընթանա՜յ վեհապանծ,
Դէպի գալիքն ու նո՛ր ափերն հեռակայ՝

Երգէ՛ թռչնակ, կեանքի՛ն համար երգէ դուն.
Շարժառիթն ի՛նչ ալ ըլլայ քու դայլայլիդ՝
Եղիր գինով, ամպրոպներու դէմ՝ կանգո՛ւն,
Եղիր արքշի՜ռ վարդի մը դէմ բոցաշիթ...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

Օգոստոս 1952

Ֆոնթընէ–Լէ–Պոիս

© National Library of Armenia